

ՀՀ ԱՌՈՂՁԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՈՒՆ
ՀՀ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՉԻ ԴԵՄ ՊԱՅԶԱՐԻ
2007-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
NATIONAL TUBERCULOSIS CONTROL
PROGRAMME, 2007-2015

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
НАЦИОНАЛЬНАЯ ПРОГРАММА ПО БОРЬБЕ С
ТУБЕРКУЛЕЗОМ, 2006-2015 г.г.

Ծրագրի հեղինակը և իրականացման պատասխանատուն է ՀՀ Առողջապահության նախարարության Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի կենտրոնական գրասենյակը

Վահան Պողոսյան` Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար

Ազգային ծրագրի մշակման խորհրդատուներ են`

Օլենա Ռաճիևսկա, ԱՀԿ, Բժշկական մասնագետ, Հարավային Կովկասի երկրներում տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագիր

Անդրեյ Մոշնյագա, **GOPA** Համաշխարհային Խորհրդատուներ կազմակերպության Ռեգիոնալ կոորդինատոր, Հարավային Կովկասում տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագիր

The author of the programme and the responsible body for its implementation is the Central Office of the National Tuberculosis Control Programme of the Ministry of Health of the Republic of Armenia

Dr. Vahan Poghosyan, Head of the National TB Control Programme

The national programme is developed with assistance of the following consultants:

Dr. Olena Radziyevska, WHO Medical Officer, Tuberculosis Control Programme in South Caucasus, and

Dr. Andrei Mosneaga, GOPA Worldwide Consultants, Team Leader, Regional Tuberculosis Control Programme, South Caucasus

Автор и ответственный за исполнение программы - Центральный офис Национальной программы по борьбе с туберкулезом Министерства здравоохранения Республики Армения

Ваан Погосян – Руководитель Национальной программы по борьбе с туберкулезом

Программа разработана при консультативной помощи следующих экспертов:

Олена Радзиевска, Медицинский Специалист ВОЗ, Программа по борьбе с туберкулезом в странах Закавказья

Андрей Мошняга, Региональный координатор организации GOPA Всемирные Консультанты, Программа по борьбе с туберкулезом на Южном Кавказе



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

28 դեկտեմբերի 2006 թվականի N 52

1. ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2007-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ տուրերկույոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային
ծրագրին և ծրագրի իրականացման ժամանակացույցին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2007 թ. հունվարի 22
Երևան



Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ԴԵՄ ՊԱՅԶԱՐԻ 2007-2015
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I Ներածություն

1. Հակատուբերկուլյոզային ծառայության կառուցվածքը և կառավարումը

Հանրապետության առողջապահության համակարգը մինչև 2006թ. հիմնականում պահպանել է խորհրդային տարիներին ձևավորված հակատուբերկուլյոզային ծառայության կառուցվածքը: Սակայն, հաշվի առնելով վերջին տարիների փորձը, ծառայության ցածր արդյունավետությունը և միջազգային փորձագետների առաջարկները, նախատեսված է հակատուբերկուլյոզային ծառայության արդիականացումը՝ բոլոր մարզերում միանման հակատուբերկուլյոզային ծառայության կառուցվածք ունենալու նպատակով՝ այն է.

- բոլոր պոլիկլինիկաներում պիտի գործեն տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետներ և խորխի հետազոտման բակտերիոսկոպիկ լաբորատորիաներ
- բոլոր մարզերում պիտի գործի մեկ հակատուբերկուլյոզային բաժանմունք
- բարդ դեպքերի վերաբերյալ լրացուցիչ հետազոտությունները, խորհրդատվությունը, անհրաժեշտության դեպքում բուժման կազմակերպումը կիրականացվի Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի «Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից :
- Տավուշի մարզի ք. Դիլիջանում կգործեն մեծահասակների և մանկական երկու առողջարանները

Հակատուբերկուլյոզային ծառայության կառավարման, ֆինանսավորման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքները, ինչպես նաև հակատուբերկուլյոզային ծառայության շրջանակներում իրականացվող միջազգային ծրագրերի, ենթածրագրերի և այլ գործողությունների համակարգումը կիրականացնի ՀՀ առողջապահության նախարարությունը Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի կենտրոնական գրասենյակի միջոցով:

2. Համաճարակային իրավիճակը

Տուբերկուլյոզը հանդիսանում է առողջապահության առավել բարդ խնդիրներից մեկը ողջ աշխարհում՝ ներառյալ Եվրոպան: Չնայած այն բանին, որ տուբերկուլյոզը բուժելի է, այն հարաճուն կերպով սպառնում է միլիոնավոր մարդկանց առողջությանը, տնտեսական և սոցիալական բարեկեցությանը: Ամեն տարի աշխարհում գրանցվում է տուբերկուլյոզի մոտ 9 մլն նոր դեպք և 2 մլն մարդ մահանում է այս հիվանդությունից:

Կենտրոնական Եվրոպայում և զարգացած շուկայական տնտեսություն ունեցող եվրոպական մյուս երկրներում 2004թ.-ին գրանցված դեպքերի թիվը կազմել է աշխարհում տուբերկուլյոզով հիվանդացության ընդամենը 1,7%-ը: Այսպիսով Եվրոպայի տուբերկուլյոզի բեռը հիմնականում պայմանավորված է նախկին ԽՍՀՄ երկրներում տուբերկուլյոզի տարածվածությունից և նրա հետևանքով մահացությունից: 2005թ. փետրվարին Առողջապահության համաշխարհային կազմակերպության /ԱՀԿ/ եվրոպական բյուրոյի տարածաշրջանային տնօրենը հայտարարեց տուբերկուլյոզի իրավիճակի հետ կապված «արտակարգ դրություն» և ԱՀԿ-ի անդամ երկրներին կոչ արեց, երկրի զարգացման և առողջապահության ոլորտում ծրագրեր մշակելիս, տուբերկուլյոզն ընդունել որպես առավել գերակայող խնդիր:

Ելնելով վտանգավորության աստիճանից, «տուբերկուլյոզ» հիվանդությունը ընդգրկվել է ՀՀ կառավարության 2001թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշմամբ հաստատված ցանկում: ՀՀ առողջապահության նախարարությունը տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագիրը շարունակում է դիտարկել որպես գերակայող:

ՀՀ-ում համաճարակաբանական իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս կանխատեսել տարեկան մոտ 2400 տուբերկուլյոզի նոր դեպքեր: Գրանցված նոր դեպքերի թիվը ցույց է տալիս, որ Հայաստանում վերջին 10 տարիներին տուբերկուլյոզով հիվանդացությունն աճել է 2,8 անգամ /1995թ.-ին գրանցված 21.6-ից 2005թ.-ին հասել է 62.4-ի՝ հարյուր հազար ազգաբնակչության հաշվարկով/: Տուբերկուլյոզով հիվանդացությունը շարունակում է աճել: Գրանցված նոր դեպքերի թիվը միայն վերջին տարում աճել է 33%-ով /2004թ-ի 1395-ից 2005թ-ին դարձել է 1856/: Սա արդյունք է և՛ տուբերկուլյոզի տարածման աճի, և՛ հիվանդության դեպքերի հայտնաբերման գործընթացի բարելավման, որը թույլ է տալիս բուժում անցկացնել և կանխել վարակի տարածումը: Նոր դեպքերի մեջ բաց /վարակիչ/ ձևերի քանակը աճել է 1.4 անգամ /100.000 ազգաբնակչության հաշվարկով՝ 1995թ. 13.5 դեպքերից, 2005թ. դարձել է 19/: Նկատվում է «ընտանեկան տուբերկուլյոզի» դեպքերի և կոնտակտավոր անձանց շրջանում հիվանդացության աճ: Տուբերկուլյոզը 87% դեպքերում ախտահարում է 15-55 տարեկան աշխատունակ տարիքի մարդկանց, ներառյալ 30%-ը, որը բաժին է ընկնում տնտեսապես առավել հեռանկարային մինչև 24 տարեկան տարիքային խմբին: Տուբերկուլյոզից մահացությունը ևս աճել է 1.4 անգամ / 100.000 ազգաբնակչության հաշվարկով՝ 1995թ. 3.7-ից,

2005թ. դարձել է 5.2: Ստեղծված իրավիճակի հիմնական պատճառներից են, մահացու ելքով հիվանդության սուր և դիսեմինացված ձևերի, ինչպես նաև հակատուբերկուլյոզային հիմնական դեղամիջոցներով չբուժվող /դեղորայքակալուն ձևեր/ դեպքերի հաճախացումը: Տուբերկուլյոզի բազմադեղորայքակալուն ձև /ոչ զգայուն ամենաքիչը երկու առավել արդյունավետ հակատուբերկուլյոզային դեղամիջոցների՝ ռիֆամպիցինի և իզոնիազիդի նկատմամբ/ հաստատվել է տուբերկուլյոզի նոր դեպքերից՝ մոտ 11% - 2003թ., մոտ 15% - 2004թ., մոտ 14.9% - 2005թ.: Նախկինում հակատուբերկուլյոզային դեղամիջոցներ ընդունած տուբերկուլյոզով հիվանդներից 40-50% դեպքերում հայտնաբերվել է դեղորայքակալուն ձև:

Ստեղծված համաճարակային իրավիճակի հիմնական պատճառներն են բնակչության սոցիալ-տնտեսական դժվարությունները, բնակչության տեղաշարժի ակտիվացումը, հակատուբերկուլյոզային հիմնական դեղամիջոցների նկատմամբ հիվանդության հարուցիչ դեղորայքակալուն ձևերի ավելացումը: «Ռիսկի» խմբերում տուբերկուլյոզի հայտնաբերման և ազգաբնակչության տուբերկուլյոզի խնդրի վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը, ինչպես նաև ազատագրկման վայրերում ոչ բավարար սանիտարա-հակահամաճարակային պայմանները և տուբերկուլյոզով բարձր հիվանդացությունը, նպաստում են տուբերկուլյոզի տարածման աճին:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակի տարածումը բերում է ինունիտետի անկման, որն էլ իր հերթին՝ վարակված անձանց մոտ ակտիվ տուբերկուլյոզի զարգացման:

3. Նպատակը և խնդիրները

Տուբերկուլյոզի դեմ պայքարի 2007 – 2015 թթ. ազգային ծրագրում զգալի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է հաջորդական կերպով իրականացնել նրա բոլոր փոխկապակցված բաղադրիչները: Նույնիսկ մեկ բաղադրիչի չիրականացումը, առանձին բժշկական ծառայությունների ցածր որակը կամ անբավարար ֆինանսավորումը բերում են ամբողջ ծրագրի ցածր արդյունավետության: Ծրագրում հաշվի են առնված ԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկվող, տուբերկուլյոզը կասեցնելու նպատակով մշակված նոր միջազգային ռազմավարությունում և նախագծում Ստոպ ՏԲ ռազմավարություն և Ստոպ ՏԲ գլոբալ պլան 2006-2015 (Stop TB strategy և Global Plan to Stop TB) տեղ գտած հիմնական ուղղություններն ու գործունեության տարրերը, ինչպես նաև՝ տուբերկուլյոզով հիվանդներին օգնության միջազգային չափանիշները: Հայաստանի Հանրապետությունում Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացումը, որպես «Հազարամյակի մարտահրավերների» գերակա խնդիրներից մեկի՝ աղքատության վերացման ևս մեկ նախապայմանի, հանդիսանում է կարևոր նպատակ:

2007-2015թթ.-ի ծրագրի ներդրման նպատակն է՝ ՀՀ-ում 2007-2015թթ-ի ընթացքում բարելավել համաճարակաբանական իրավիճակը՝ հիվանդացության և տուբերկուլյոզից մահացության, տուբերկուլյոզի կայուն ձևերի զարգացման աճի իջեցման միջոցով :

Ծրագրի խնդիրներն են՝

1. Տուբերկուլյոզի դեմ պայքարին ուղղված ազգային քաղաքականության, պետական աջակցության զարգացում և իրականացում :
2. Հայաստանում ընդունված և միջազգայնորեն առաջարկվող «Ուղղակիորեն դիտվող կարճաժամկետ բուժում» (ԴՌԹՄ) հակատուբերկուլյոզային ռազմավարության բոլոր քաղաքիչների կատարման բարելավում:
3. Տուբերկուլյոզի դեղորայքակայուն ձևերով հիվանդների որակյալ բուժման ներդրման նախապատրաստում և ապահովում:
4. Առողջության առաջնային պահպանման օղակի և ընդհանուր բուժցանցի ներգրավում հակատուբերկուլյոզային ենթակառուցվածքում:
5. ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի հետ համագործակցության ամրապնդում՝ ՏԲ / ՄԻԱՎ համակցված վարակի դեպքերի դեմ պայքարի նպատակով:
6. Կանխարգելիչ միջոցառումների ապահովում՝ ներառյալ տուբերկուլյոզի հայտնաբերման օջախներում:
7. Համակարգում և որակյալ հակատուբերկուլյոզային միջոցառումների իրականացում՝ ազատագրկման վայրերում:
8. Համակարգում և որակյալ հակատուբերկուլյոզային միջոցառումների իրականացում զինծառայողների շրջանում:
9. Ազգաբնակչության իրազեկման բարձրացում:
10. Կադրերի պատրաստում՝ առողջապահական բոլոր մակարդակներում հակատուբերկուլյոզային ծառայություններ իրականացնելու համար:

4. Ակնկալվող արդյունքները

Ծրագրի ներդրման ակնկալվող արդյունքներն արտացոլում են ինչպես ախտորոշիչ, բուժիչ և այլ բժշկական ու կազմակերպչական միջոցառումների արդյունավետությունը, այնպես էլ նրա ազդեցությունը՝ տուբերկուլյոզի բնագավառում համաճարակային իրավիճակի վրա: Դրանք են՝

1. 2008թ-ին ապահովել բազմադեղորայքակայուն տուբերկուլյոզով հիվանդների բուժման սկիզբը:
2. 2009թ-ին ապահովել տուբերկուլյոզի 70% հայտնաբերման մակարդակ, հաջորդող տարիներին պահպանել և բարելավել այդ արդյունքը:
3. 2009թ-ին ապահովել հիմնական դեղամիջոցների նկատմամբ զգայուն տուբերկուլյոզի դեպքերի 85% բարեհաջող բուժում:
4. 2009թ-ին երկու անգամ կրճատել բուժումն ընդհատող հիվանդների թիվը:
5. 2015թ.-ին հասնել առնվազն 60% բարեհաջող բուժման՝ բազմադեղորայքակայուն տուբերկուլյոզով հիվանդների մոտ:
6. 2015թ-ին նվազեցնել հիվանդացության աճը և ստեղծել նախապայմաններ հաջորդող տարիներին հիվանդացությունը նվազեցնելու համար:
7. 2015թ-ին ապահովել նոր հայտնաբերված հիվանդների մեջ դեղորայքակայուն տուբերկուլյոզով հիվանդների թվի նվազում՝ առնվազն 20 %-ով:
8. Կատարելագործել բուժանձնակազմի պատրաստման և վերապատրաստման համակարգը: Բուժանձնակազմի առնվազն 80 %-ին ընդգրկել հակատուբերկուլյոզային ծառայության միջազգային չափանիշների ուսուցման գործընթացում:

II. Տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակի բարելավման ռազմավարություն

Նպատակը՝ ՀՀ-ում 2007-2015 թթ-ի ընթացքում հիվանդացության, տուբերկուլյոզից մահացության և կայուն ձևերի զարգացման աճի իջեցում:

Ռազմավարություն 1. Ազգային քաղաքականության զարգացում և պետական աջակցություն Տուբերկուլյոզի դեմ պայքարի ոլորտում :

Նպատակը՝ ուժեղացնել հակատուբերկուլյոզային միջոցառումների պլանավորման, կառավարման, ֆինանսավորման, մոնիտորինգի և գնահատման միասնական համակարգը՝ ազգային և մարզային մակարդակներում:

Միջոցառումներ՝

1. Տուբերկուլյոզի դեմ պայքարի պետական մակարդակով միջգերատեսչական հակազդեցության համակարգման նպատակով՝ բարձրացնել և ուժեղացնել ՄԻԱՎ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող մարմնի (ՄՀՀ)

դերը միջոցառումների պլանավորման, կառավարման մոնիտորինգի և գնահատման գործընթացներում:

2. Ուժեղացնել Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի դերը, որպես ՀՀ առողջապահության նախարարության ֆունկցիոնալ կենտրոն, որն ապահովում է ծրագրի իրականացման պլանավորումը, համակարգումը, վերլուծական-տեղեկատվական գործունեությունը և մոնիտորինգը:

3. Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի մարզային համակարգողների միջոցով բարելավել Երևան քաղաքի և մարզերի տուբերկուլյոզի դեմ պայքարի խորհրդների միջև եղած կապը հիվանդներին սոցիալական աջակցություն տրամադրելու, մարզային հակատուբերկուլյոզային հաստատություններին աջակցելու /վերանորոգում, հիվանդների սնունդ, կազմակերպչական խնդիրներ/ գործընթացներում:

Ռ-ազմավարություն 2. Հակատուբերկուլյոզային ենթակառուցվածքի բարեփոխումներ և համակարգում բուժման կազմակերպման բոլոր մակարդակներում:

Նպատակը՝ Արդիականացնել Երևան քաղաքի և մարզերի հակատուբերկուլյոզային ծառայության կառուցվածքը՝ նպատակ ունենալով դարձնել այն առավել արդյունավետ և հնարավորինս հասանելի բնակչությանը:

Միջոցառումներ՝

1. Օպտիմալացնել և ապահովել հակատուբերկուլյոզային ծառայության / Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի /կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը , ազգային, մարզային, համայնքների մակարդակներում, ինչպես նաև վերջիններիս անհրաժեշտ կադրային ապահովումը:

2. Կատարելագործել օրենսդրական դաշտը՝ տուբերկուլյոզի դեմ պայքարի ոլորտում:

3. Մշակել և ներդնել ազգային չափորոշիչներ հակատուբերկուլյոզային ենթակառուցվածքում առողջության առաջնային պահպանման օղակի և ընդհանուր բուժցանցի ներգրավման նպատակով:

4. Մշակել և ներդնել տուբերկուլյոզի, այդ թվում դեղորայքակայուն ձևերի, բուժման ազգային չափորոշիչներ և արձանագրություններ՝ կիրառելով երկրի մասնագետների փորձը, մասնավորապես, տուբերկուլյոզի վիրաբուժական և առողջարանային բուժման ոլորտում, ինչպես նաև հաշվի առնելով այդ բնագավառում առկա միջազգային փորձը և առաջարկները:

5. Մշակել ուսուցողական նյութեր, ուսուցման քաղաքականություն և ուսուցման անցկացման ժամանակացույց՝ առողջապահության համակարգի տարբեր մակարդակներում

հակատուբերկուլյոզային ծառայությունն իրականացնող մասնագետների պատրաստման և վերապատրաստման համար:

6. Կատարելագործել միասնական տեղեկատվական համակարգը՝ ինչպես յուրաքանչյուր տուբերկուլյոզի դեպքի վարման, այնպես էլ ազգային հակատուբերկուլյոզային ծրագրի և համաճարակաբանական իրավիճակի գնահատման և մոնիտորինգի նպատակով:

7. Տուբերկուլյոզի դեմ պայքարի համակարգման նպատակով՝ կազմակերպել տուբերկուլյոզի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը ՀՀ առողջապահության, ՀՀ պաշտպանության, ՀՀ արդարադատության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության միջև:

Ռ-ազմավարություն 3. Հայաստանում ընդունված միջազգայնորեն առաջարկվող հակատուբերկուլյոզային ԴՌԾՄ ռազմավարության բոլոր բաղադրիչների իրականացման բարելավում

Նպատակը՝ հակատուբերկուլյոզային միջոցառումների շարունակական ապահովման բարելավում

Միջոցառումներ՝

1. Տուբերկուլյոզի հայտնաբերում և ախտորոշում.

ա/ մշակել և ներդնել տուբերկուլյոզի ախտորոշման ազգային չափորոշիչներ – լաբորատոր ախտորոշման և այլ լրացուցիչ մեթոդների (թեստավորում), ինչպես նաև տարբեր մակարդակների լաբորատորիաների կանոնակարգերի վերաբերյալ՝ ներառելով մասնագետների նյութական ապահովվածությունը: Աստիճանաբար ապահովել բոլոր տուբերկուլյոզով հիվանդների և կասկածյալների որակյալ կուլտուրալ հետազոտություն՝ որպես պարտադիր չափորոշիչ (2 լաբորատորիաներում՝ Ազգային ռեֆերենս լաբորատորիայում և Երևանի Քաղաքային հակատուբերկուլյոզային դիսպանսերի լաբորատորիայում), ապահովել դեղազգայունության թեստավորում և որոշում Ազգային ռեֆերենս լաբորատորիայում;

բ/ ապահովել պարտադիր բակտերիոսկոպիկ և բակտերիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը բուժօգնության բոլոր մակարդակներում՝ օպտիմալացման ծրագրին համապատասխան;

գ/ լաբորատորիաները և խորխի հավաքման կետերը ապահովել անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, նախատեսել լաբորատորիաների նյութական

մատակարարման աստիճանաբար անցումը արտաքին դոնորներից պետական ֆինանսավորման;

դ/ ուժեղացնել լաբորատոր ախտորոշման ներքին և արտաքին որակի ստուգման համակարգը, ապահովել կանոնավոր կապ վերագրային լաբորատորիայի հետ՝ Ազգային ռեֆերենս լաբորատորիայի աշխատանքի որակի արտաքին վերահսկողությունն ապահովելու նպատակով:

2. Տուբերկուլյոզի հայտնաբերումն առավելապես պետք է իրականացվի այն հիվանդների մոտ, որոնք դիմել են բժշկական հաստատություններ ախտանշանային գանգատներով՝ որպես տուբերկուլյոզի հայտնաբերման առավել արդյունավետ և քիչ ծախսատար մոտեցում: Տուբերկուլյոզի ակտիվ հայտնաբերում պետք է իրականացվի “բարձր ռիսկի” խմբերում (տուբերկուլյոզի բարձր տարածվածությամբ), ընդգրկելով՝

ա/ անձիք, որոնք ունեցել են մոտ կամ երկարատև շփում թոքային տուբերկուլյոզի բաց ձևով հիվանդների հետ;

բ/ ազատագրկման վայրերում գտնվող անձիք;

գ/ ՄԻԱՎ վարակակիր հիվանդներ;

դ/ գորակոչիկներ և զինծառայողներ;

ե/ ազգաբնակչության այլ խմբեր (անհրաժեշտության դեպքում), այդ թվում տարաբնակեցվածներ և ներարկող թմրամուլներ:

3. Ստանդարտացված բուժում և աջակցում հիվանդներին.

ա/ ապահովել տուբերկուլյոզով հիվանդների բուժումն ըստ կատեգորիաների նրանց դասակարգման և ուղղակիորեն հսկվող բուժման առաջարկվող ստանդարտ սխեմաների՝ միջազգային չափորոշիչների հիման վրա, իսկ հետագայում, ազգային բուժման արձանագրություններ ներդնելուց հետո, վերջիններիս հիման վրա;

բ/ խթանել գործունեության տարբեր ձևեր, որոնք ուղղված են բուժման ողջ կուրսի ընթացքում հիվանդների հետևողական լինելուն՝

- հիվանդներին սննդի տրամադրում;

- հիվանդներին և նրանց մտերիմներին խորհրդատվության տրամադրում /զրույցներ, լուսաբանում, հոգեբանական օգնություն/;

- անվճար դեղորայքի տրամադրման հեշտացում;

- հակատուբերկուլյոզային դեղորայքի բուժանձնակազմի հսկողության ներքո ընդունում և այլն:

4. Դեղամիջոցների մատակարարում.

ա/ ապահովել բարձր որակի հակատուբերկուլյոզային դեղամիջոցների անխափան մատակարարումը՝ առաջին կարգի դեղամիջոցների ժամանակին պլանավորման, գնման և բաշխման միջոցով;

բ/ նախատեսել օրենսդրական կարգով Համաշխարհային դեղորայքային ֆոնդից առաջին կարգի որակյալ դեղամիջոցների ձեռք բերման հնարավորությունը ՀՀ պետական բյուջեյի ֆինանսավորմամբ;

գ/ կատարելագործել դեղատնային մանրածախ համակարգում հակատուբերկուլյոզային դեղամիջոցների վաճառքի կանոնակարգումը՝ անվերահսկելի ձեռք բերումն ու սխալ օգտագործումը կանխելու նպատակով, քանի որ վերջինս բերում է դեղորայքակայունության զարգացման:

5. Ծրագրի ազդեցության գնահատման և մոնիտորինգի համակարգ.

ա/ բարելավել տուբերկուլյոզի դեպքերի հաշվառումը՝ /օր-դեպք, բուժման արդյունքներ սահմանումը և դասակարգումը/ միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան;

բ/ ստեղծել հաշվառման և հաշվետվության միասնական համակարգ /քաղաքացիական և ազատագրկման վայրերի համակարգերի համար/.

գ/ մշակել տվյալների միասնական համակարգ տուբերկուլյոզի բոլոր գրանցված դեպքերի համար /ռեգիստր/.

դ/ բարելավել հաշվառման և հաշվետվության համակարգի վարումը՝ տուբերկուլյոզի բուժանձնակազմի դասընթացների միջոցով;

ե/ առավել մեծ ուշադրություն հատկացնել հաշվառման և հաշվետվության թղթաբանությանը, Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի և մարզային համակարգողների կողմից տուբերկուլյոզի մասնագետների աշխատանքի պարբերական հսկմանը /հսկում, ստուգայց/: Գնահատել ռեգիստրացիոն ձևերի վարման և ժամանակին ներկայացման ճշգրտությունն ու ամբողջականությունը;

զ/ բարելավել լաբորատոր արդյունքների ներառումը հաշվառման և հաշվետվության միասնական համակարգում;

է/ տուբերկուլյոզով հիվանդացության իրավիճակը և համակարգված գործունեությունը գնահատելու նպատակով յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ մարզերից տրամադրել Դ-ՈԹՄ /համապատասխան ընդունված ձևի/ ռազմավարության ներդրման վերաբերյալ տվյալները.

ը/ լրացնել դեղորայքի տրամադրման համար անհրաժեշտ ռեգիստրացիոն ձևերը;

թ/ իրականացնել արագ գնահատում՝ պաշտոնական տվյալների հիման վրա;

ժ/ ներդնել հաշվառման և հաշվետվության էլեկտրոնային համակարգ՝ տուբերկուլյոզի վերահսկման ոլորտում;

ժա/ նախատեսել բոլոր բուժաշխատողների կողմից տուբերկուլյոզի բոլոր դեպքերի վերաբերյալ պարտադիր տեղեկացման կարգ՝ միասնական ազգային տուբերկուլյոզի տվյալների բազա ներմուծելու համար;

ժբ/ նախատեսել Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի և մարզային համակարգողների կողմից տուբերկուլյոզի մասնագետների աշխատանքի վերահսկումն իրականացնելու համար անհրաժեշտ պլանավորում, կազմակերպում, նյութատեխնիկական և ֆինանսական ապահովում:

Ռազմավարություն 4. Ղեկորայքակայուն տուբերկուլյոզով հիվանդների բուժման համար միջազգայնորեն առաջարկվող ԴՌԹՄ Պլյուս ռազմավարության ներդրում Հայաստանում

Նպատակը՝ Տուբերկուլյոզի ղեկորայքակայուն ձևերով հիվանդների որակյալ բուժման ներդրման նախապատրաստում և ապահովում:

Միջոցառումներ՝

1. Ապահովել նյութատեխնիկական /այդ թվում կուլտուրալ և դեղագալունության հետազոտությունների արագացված ավտոմատացված համակարգ/, կադրային և ֆինանսական հնարավորություններ՝ Ազգային Ռեֆերանս Լաբորատորիայում տուբերկուլյոզով հիվանդների քանակին ադեկվատ կուլտուրալ հետազոտությունների ծավալ, տուբերկուլյոզի միկոբակտերիաների իդենտիֆիկացիա, առաջին և երկրորդ շարքի դեղամիջոցների նկատմամբ միջազգային չափանիշներին համապատասխան դեղագալունության թեստերի անցկացման համար:

2. Վերլուծել տուբերկուլյոզի ղեկորայքակայուն ձևերի վարման փորձարարական ծրագրերի փորձը և մշակել ազգային ցուցումներ՝ միջազգային ԴՌԹՄ Պլյուս մոտեցումներին համապատասխան:

3. Պատրաստել հիվանդանոցային տարածքներ՝ խստորեն պահպանելով վարակի հսկման կանոնները:

4. Նպաստել Կանաչ Լույս Կոմիտեի առաքելության գործունեությանը, որը պետք է գնահատի հակատուբերկուլյոզային ծառայության որակը՝ ԴՌԹՄ-ի բաղադրիչների իրականացման շրջանակներում և Հայաստանի պատրաստվածությունը ԴՌԹՄ Պլյուս ծրագրի ներդրման համար:

5. Հաշվի առնելով Կանաչ Լույս Կոմիտեի առաքելության արդյունքները և ցուցումները, ժամանակին պատրաստել դիմում ուղղված այդ կոմիտեին՝ առավելապես ցածր գներով երկրորդ շարքի դեղամիջոցներ գնելու և ծրագրի ԴՌԹՄ Պլյուս բաղադրիչը Գլոբալ Հիմնադրամի ֆինանսավորմամբ ներդնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ:

6. Մշակել և ներդնել տուբերկուլյոզի ղեկորայքակայուն ձևերի վարման և բուժման վերաբերյալ ուսուցողական ծրագրեր:

Ռազմավարություն 5. Ապահովել առաջնային բուժցանցում ԴՌԹՄ-ի իրականացման նախապայմանները

Նպատակը` Առողջության առաջնային պահպանման օղակի և ընդհանուր բուժցանցի ներգրավում հակատուբերկուլյոզային ենթակառուցվածքում

Միջոցառումներ`

1. Օրենսդրական, կարգավորող /չափորոշիչների մշակում / և կրթական աջակցություն:
2. Առողջության առաջնային բուժցանցի բուժաշխատողներին պարտադրել իրականացնել տուբերկուլյոզով հիվանդների հայտնաբերում և հետհիվանդանոցային բուժում` ուղղակիորեն հսկման տակ, այս ամենը պետք է պարբերաբար համակարգվի տուբերկուլյոզի մասնագետների կողմից և նրանց խորհրդակցությամբ:
3. Կազմակերպել դեղորայքի տրամադրման և ուղղակիորեն հսկման տակ ընդունման կետեր` հիվանդների բնակության վայրերին մոտ, քաղաքային պայմաններում:
4. Ներդնել դեղորայքով ապահովման և ուղղակիորեն հսկման տակ ընդունման համակարգ` հիվանդներին հարմար գյուղական վայրերում:

Ռազմավարություն 6. ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման ազգային ծրագրի հետ համագործակցության ամրապնդում` ՏԲ / ՄԻԱՎ համակցված վարակի դեպքերի դեմ պայքարի համար

Նպատակը` կասեցնել տուբերկուլյոզի տարածումը կապված ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հիվանդացության աճի հետ

Միջոցառումներ`

- 1 ՀՀ առողջապահության նախարարության և ՄՀՀ ղեկավարությամբ ստեղծել ՄՀՀ-ի անդամներից և ՏԲ/ ՄԻԱՎ/ՉԻԱՀ ոլորտի փորձագետներից կազմված մշտական գործող աշխատանքային խումբ, որը կմշակի քաղաքականություն, կալանավորի և կհամակարգի համատեղ գործողությունները, կապահովի վերահսկման միասնական համակարգ և համատեղ գործողությունների արդյունավետության գնահատում, ինչպես նաև կմշակի ՏԲ/ՄԻԱՎ/ՉԻԱՀ հիվանդների ախտորոշման, բուժման, կանխարգելման և նրանց վերահսկմանն ուղղված կրթական ծրագրերի վերաբերյալ ուղեցույցներ:
2. Մշակել ազգային ցուցումներ ՏԲ/ՄԻԱՎ համատեղ վարակի ախտորոշման, բուժման, կանխարգելման և նրանց վերահսկմանն ուղղված կրթական ծրագրերի վերաբերյալ:
3. Ներդնել համատեղ միջոցառումների համակարգ ՄԻԱՎ վարակակիրների մոտ տուբերկուլյոզի բեռը նվազեցնելու նպատակով`

ա/ տուբերկուլյոզի ակտիվ հայտնաբերում ՄԻԱՎ վարակակիրների շրջանում;

բ/ գաղտնի տուբերկուլյոզի բուժումը ՄԻԱՎ վարակակիրների մոտ;

գ/ վարակի վերահսկման կանոնների խստորեն պահպանում՝ ՄԻԱՎ վարակակիրներին ներհիվանդանոցային տուբերկուլյոզի վարակից պաշտպանելու նպատակով:

4. Ներդնել համատեղ միջոցառումների համակարգ տուբերկուլյոզով հիվանդների մոտ ՄԻԱՎ-ի բեռը նվազեցնելու նպատակով՝

ա/ բոլոր տուբերկուլյոզով հիվանդներին ապահովել կամավոր խրհրդատվությամբ և ՄԻԱՎ թեստավորմամբ;

բ/ բոլոր ՏԲ/ՄԻԱՎ/ՉԻԱՀ հիվանդներին ապահովել ԱՀԿ-ի կողմից առաջարկվող և ազգային ուղեցույցներով նախատեսված երկու հիվանդությունների ադեկվատ բուժուման հնարավորությամբ՝ ներառյալ հակառետտովիրուսային բուժումը:

5. կատարելագործել հիվանդներին տարբեր կազմակերպություններից և ծառայություններից մեկը մյուսին ուղեգրման /ՏԲ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, առողջության առաջնային պահպանման օղակ, ընդհանուր բուժ.ցանց/, ինչպես նաև գաղտնիության պահպանման համակարգերը:

Ռ-ազմավարություն 7. Կանխարգելիչ միջոցառումների ապահովում՝ ներառյալ տուբերկուլյոզի հայտնաբերման օջախներում

Նպատակը՝ կասեցնել տուբերկուլյոզի վարակի տարածումը, նպաստել համաճարակային իրավիճակի կայունացմանը:

Միջոցառումներ՝

1. Վերանայել ԲՑԺ պատվաստանյութով պատվաստման միջոցով մասնակի իմունիտետի ակտիվ առաջացման ծրագիրը, հաշվի առնելով միջազգային փորձը և մասնավորապես ԱՀԿ-ի կարծիքը կրկնապատվաստման անարդյունավետության մասին: Իմունոկանխարգելման ազգային ծրագրի հետ համատեղ մշակել ԲՑԺ պատվաստանյութով պատվաստման ծրագրի կատարման մոնիտորինգի, արդյունքների վերլուծության, հակացուցումների, տնտեսական արդյունավետության, տեղեկատվության տրամադրման մեթոդական մոտեցումները միջազգային ցուցումներին և ՀՀ համաճարակյին իրավիճակին համապատասխան :

2. Անցկացնել կանխարգելիչ /պրեվենտիվ/ բուժում վարակի օջախում վարակված մինչև 14 տարեկան երեխաների շրջանում :

3. Անցկացնել ազատագրկման վայրերում գտնվող անձանց պարտադիր բժշկական հետազոտություն տուբերկուլյոզի վաղ հայտնաբերման նպատակով:

4. Անցկացնել զինծառայության մեջ գտնվող անձանց պարտադիր բժշկական հետազոտություն տուբերկուլյոզի վաղ հայտնաբերման նպատակով:

5. Ազգաբնակչությանը «Մ.Բովիս» հարուցիչով պայմանավորված տուբերկուլյոզից պաշտպանելու նպատակով ապահովել անասնաբուժական-սանիտարական միջոցառումներ, որոնք կիրականացվեն անասնաբուժական, սանիտարա- համաճարակաբանական և հակատուբերկուլյոզային ծառայությունների կողմից:

Ռազմավարություն 8. Համակարգում և որակյալ հակատուբերկուլյոզային միջոցառումների իրականացում՝ ազատագրկման վայրերում, ինչպես նաև զինծառայության մեջ գտնվող տուբերկուլյոզով հիվանդների նկատմամբ

Նպատակը՝ կասեցնել տուբերկուլյոզի վարակի տարածումը ազատագրկման վայրերում և զինծառայողների շրջանում

Միջոցառումներ՝

1. Ապահովել ազատագրկման վայրերում գտնվող տուբերկուլյոզով հիվանդների վաղ հայտնաբերումը և պարտադիր լիարժեք բուժումը ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական համակարգի բժշկական սպասարկման ծառայության միջոցով

ա/ ուժեղացնել տուբերկուլյոզով հիվանդների հայտնաբերմանն ողղված աշխատանքները կալանավայրեր ընդունվածների բժշկական հետազոտության, ինչպես նաև ազատագրկման ընթացքում զանգվածային հետազոտությունների և ընթացիկ հսկողության կազմակերպման միջոցով;

բ/ ապահովել տուբերկուլյոզի ախտորոշման համար անհրաժեշտ լաբորատոր և ֆունկցիոնալ հետազոտությունների մատչելիությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման հաստատություններում, ինչպես նաև, ազատագրկման վայրերում գտնվող անձանց բժշկական սպասարկում իրականացնող բուժհաստատություններում;

գ/ ապահովել ազատագրկման վայրերում գտնող վարակիչ թոքային տուբերկուլյոզով (խորխի դրական քսուքով) հիվանդների պարտադիր մեկուսացումը;

դ/ ապահովել ազատագրկման վայրերում գտնող տուբերկուլյոզով հիվանդների հոսպիտալացումը հատուկ տուբ. հաստատություններում;

ե/ ապահովել քրեակատարողական հիմնարկների բուժ. ծառայությունների կողմից արձանագրված տուբերկուլյոզով հիվանդների տվյալների պարտադիր փոխանցումը վերջիններիս բնակության վայրերում գտնվող հակատուբերկուլյոզային հաստատություններին;

զ/ ապահովել տուբերկուլյոզով հիվանդ յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը (Ձև ՏԲ09) նրա մշտական բնակության վայրին կից հակատուբերկուլյոզային

հաստատությանը՝ ազատագրկման վայրից ազատ արձակվելուց հետո՝ առավելագույնը հինգ օրվա ընթացքում;

է/ ապահովել քաղաքացիական հակատուբերկուլյոզային հաստատություններում բուժման ընթացքում կալանավորված անձանց վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժին;

ը/ ապահովել ազատագրկման վայրերից ազատ արձակված տուբերկուլյոզով հիվանդների գրանցումը և բուժման հսկողությունը նրանց բնակության վայրերում գտնվող հակատուբերկուլյոզային հաստատություններում.

թ/ ապահովել տուբերկուլյոզի բուժման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը քաղաքացիական և կալանավայրերում գործող հակատուբերկուլյոզային ծառայությունների միջև;

ժ/ պարտադիր նշել տուբերկուլյոզի առկայությունը այն տեղեկանքում, որը տրվում է անձին՝ ազատագրկման վայրից վերադառնալուց հետո,

ժա/ ապահովել ՀՀ արդարադատության նախարարության տուբերկուլյոզի վերահսկման ծրագրին անհրաժեշտ հակատուբերկուլյոզային դեղերը, բժշկական պարագաները, լաբորատոր նյութերը և հաշվառման/հաշվետվության ձևերը՝ Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի մատակարարման կենտրոնացված համակարգից;

ժբ/ ապահովել ՀՀ արդարադատության նախարարության տուբերկուլյոզի վերահսկման ծրագրին անհրաժեշտ հակատուբերկուլյոզային բուժման կողմնակի ազդեցությունների վարման դեղերը, դրանց հետ կապված բժշկական պարագաները և լաբորատոր նյութերը՝ ՀՀ արդարադատության նախարարության մատակարարման համակարգից;

ժգ/ ապահովել իրազեկման և առողջության լուսաբանման աշխատանքների պարբերաբար անցկացում բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց և նրանց անձնակազմի շրջանում;

ժդ/ ներգրավել ՀՀ արդարադատության նախարարության բուժանձնակազմին Տուբերկուլյոզի Ազգային Ծրագրի շրջանակներում իրականացվող ուսուցողական և վերապատրաստման դասընթացներում:

2. Ձինծառայության ընթացքում ինչպես նաև զորացումից հետո հակատուբերկուլյոզային միջոցառումների անընդմեջ ապահովումը.

ա/ ապահովել զինծառայողների և սպայական կազմի ընթացիկ հետազոտությունը;

բ/ ապահովել զինված ուժերում տուբերկուլյոզով հիվանդների հոսափտալացումը տուբերկուլյոզային հաստատություններում և պարտադիր բուժումը;

գ/ ապահովել վարակիչ ձևով տուբերկուլյոզով հիվանդ զինծառայողների մեկուսացումը;

դ/ ապահովել Տուրերկուլյոզի Ազգային Ծրագրով ընդունված գրանցման և հաշվետվության ձևերի կիրառումը և տվյալների ընդգրկումը ազգային ընդհանուր տեղեկատվության համակարգում:

Ռազմավարություն 9. Ազգաբնակչության իրազեկման բարձրացում

Նպատակը՝ Բնակչության տուրերկուլյոզի վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում, տուրերկուլյոզով հիվանդի և նրա ընտանիքի անդամների նկատմամբ խարանի և խտրականության նվազեցում

Միջոցառումներ՝

1. Մշակել հասարակության իրազեկման ռազմավարություն՝ տուրերկուլյոզի հարցերում տուրերկուլյոզով կասկածելի անձանց դիմում բուժօգնության, տուրերկուլյոզով հիվանդների և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ խարանի և խտրականության նվազեցում, ինչպես նաև հասարակության կողմից տուրերկուլյոզով հիվանդներին աջակցության հզորացում:

2. Ապահովել տեղեկատվական միջոցառումների պարբերաբար անցկացում առողջապահության և անասնաբուժական ծառայությունների համատեղ մասնակցությամբ՝ ուղղված ինչպես ընդհանուր ազգաբնակչությանը, այնպես էլ առանձին խմբերին (օրինակ, զինատորաբաժանումներ, բարձր դասարաններում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողներ, ինչպես նաև դաստիարակներ և դասավանդողներ):

3. Կիրառելի բոլոր միջոցներով և ճանապարհներով, ներառյալ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցում, խորհրդատվություն, տեղեկատվական-կրթական նյութերի տրամադրում, համայնքային միջոցառումների իրականացում՝ նախկին տուրերկուլյոզով հիվանդների ակտիվ ներգրավմամբ:

4. Ակտիվորեն ներգրավել զանգվածային լրատվական միջոցները ազգաբնակչությանը տուրերկուլյոզի վերաբերյալ իրազեկության հզորացման հարցում՝ շեշտադրելով հիվանդության բուժելիությունը, ախտորոշման և բուժման ծառայությունների անվճարությունը , հիվանդների և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ խարանի և խտրականության նվազեցումը:

III Ֆինանսավորում

Ազգային ծրագրով նախատեսվում է համապատասխան միջոցառումներ իրականացնել 2007-2015 թվականներին ընկած ժամանակահատվածում:

Ազգային ծրագրի իրականացման աշխատանքները համակարգելու է ՄԻԱՎ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող մարմինը:

Ազգային ծրագրի իրագործման ֆինանսավորման աղբյուրներն են՝

-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից առողջապահության

նպատակային ծրագրերի համար հատկացված գումարներ

-Միջազգային կազմակերպությունների նպատակային ֆինանսավորումը

-Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ին հակազդման բնագավառում 2007-2015 թվականներին իրականացվելու են առաջնահերթ միջոցառումներ՝ համաձայն ժամանակացույցի (հավելված 2):

IV Համագործակցող կողմերը

- ՀՀ առողջապահության նախարարություն
- ՀՀ կրթության և գիտության նախարարություն
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն
- Տեղական ինքնակառավարման մարմինները
- ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն
- ՀՀ-ում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողով
- Աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագիր
- Իմունականխարգելման ազգային ծրագիր
- ՍԱԿ-ի գործակալություններ
- բազմակողմ/երկկողմ զարգացման գործընկերներ
- տեղական հասարակական կազմակերպություններ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՁԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2007-2015
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

<i>Միջոցառումների անվանումները</i>	<i>Կատարող մարմինը</i>	Ֆինանսավորման աղբյուրը	<i>Կատարման ժամկետը</i>
